ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-18/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.06.2016թ. թիվ 1/73-1/16694-16 և 11.07.2016թ. թիվ 1/73-3/18057-16 գրություններով ներկայացված «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01261341), «ՍԱՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 7716774368) (կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-18/17 բողոք), «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 30.05.2016թ. թիվ 03/05.03, 08.06.2016թ. թիվ 01/06.01, 08.06.2016թ. թիվ 02/06.02 և 11.07.2016թ. թիվ 1/07.17 գրությունները, Երևանի քաղաքապետարանի 23.05.2016թ. թիվ 04/10162, 30.05.2016թ. թիվ 04/10845, 07.06.2016թ. թիվ 04/11666, 08.06.2016թ. թիվ 06/838, 09.06.2016թ. թիվ 01/61-11888 և 06.07.2017թ. թիվ 01/61-14304 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/9» ծածկագրով պայմանագիրը, պարզեց.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.06.2016թ. թիվ 01/61-11888 և 06.07.2016թ. թիվ 01/61-14304 գրությունների հիման վրա, 20.06.2016թ. թիվ 1/73-1/16694-16 և 11.07.2016թ. թիվ 1/73-3/18057-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին (այսուհետ

նաև՝ Ընկերություն) և «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին և «ՍԱՄ» ՍՊԸ-ին (կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակիցներին Ցուցակում ներառելու համար:

Նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի վերը նշված գրությունները՝ կից ներկայացված փաստաթղթերի պատճեններով:

2. «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 24.06.2016թ. թիվ 01/04.1/2464-16 և 18.07.2016թ. թիվ 01/04.1/2762-16 գրություններով դիմել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին:

Ընկերությունն, ի պատասխան Կենտրոնի 24.06.2016թ. թիվ 01/04.1/2464-16 գրությանը, 11.07.2016թ. թիվ 1/07.11 գրությամբ հայտնել է, որ փոփոխվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն, ինչի վերաբերյալ Ընկերության նոր էլեկտրոնային փոստից norenergy01@gmail.com գրություն է ուղարկվել Պատվիրատուի՝ gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին, որով վերջինս Պատվիրատուին տեղեկացրել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխման վերաբերյալ, ուստի Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված նամակները պետք է ուղարկեր նոր հասցեով, ինչը չի արել: Բացի այդ, Ընկերությունը նշել է, որ մի քանի անգամ դիմել է նմուշների հաստատման, ապրանքների տեղադրման հասցեների տրամադրման համար, որը Երևանի քաղաքապետարանի կողմից չի կատարվել:

Հետևաբար, Ընկերությունը համաձայն չի Երևանի քաղաքապետարանի և «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի միջև 12.05.2016թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/9» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ նաև՝ Պայմանագիր) միակողմանի լուծմանը:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշում

Երևանի քաղաքապետարանը 09.06.2016թ. թիվ 01/61-11888 գրությամբ դիմել է Նախարարությանը և հայտնել, որ Երևանի քաղաքապետարանի և «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի միջև 12.05.2016թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/9» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Պատվիրատուն բազմիցս տեղեկացրել է Ընկերությանը պայմանագրային

պարտավորությունները սահմանված ժամկետում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ՝ նշելով ապրանքի մատակարարման և տեղադրման հասցեները:

Երևանի քաղաքապետարանը նշել է, որ 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությամբ առաջարկել է Ընկերությանը 06.06.2016թ. մատակարարել և տեղադրել Պայմանագրով մայիս ամսվա համար նախատեսված ապրանքները նշված հասցեներով, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, ինչի արդյունքում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Պատվիրատուն 06.07.2016թ. թիվ 01/61-14304 գրությամբ Նախարարությանը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նոր-Էներջի» ՍՊԸ և «Սամ» ՍՊԸ կոնսորցիումը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ կոնսորցիումը երեք աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչի արդյունքում վերջինիս հայտը մերժվել է:

<u>4. ՍՑ-ԳԲԽ-18/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

1. *ՀՀ ֆինանսների նախարարության 20.06.2016թ. թիվ 1/73-1/16694-16 գրությամբ ներկայացված «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝*

- Երևանի քաղաքապետարանի և «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի միջև 12.05.2016թ. կնքվել է Երևան քաղաքի փողոցների, հրապարակների և այգիների կահավորման նպատակով նստարանների և աղբամանների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/9» ծածկագրով պայմանագիր:
- Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ վաճառողը ապրանքը հասցնում է գնորդին (ստացողին)՝ նրա կողմից նշված հասցեով (հասցեներով):
- «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ***09.05.2016թ.*** էլեկտրոնային արտատպման համաձայն, վերջինս Պատվիրատուին խնդրել է, որ այսուհետ նամակները ուղարկվեն Ընկերության փոփոխված՝ norenergy01@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին:

• Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսվել է 1-ին չափաբաժնով ***30 հատ*** «Նստարան «Երևան», 2-րդ չափաբաժնով ***30 հատ*** «Աղբաման մեծ /ձուլվածքով/» և 3-րդ չափաբաժնով ***30 հատ*** «Աղբաման փոքր /ձուլվածքով/» ապրանքները մատակարարել 2016թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում՝ ըստ ամիսների:

• Երևանի քաղաքապետարանը 23.05.2016թ. թիվ 04/10162 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ տեղեկացնելով, որ համաձայն Պայմանագրի՝ վերջինս պետք է ***30.05.2016թ.-ին*** Պատվիրատուին մատակարարի 1-ին չափաբաժնով նախատեսված թվով ***30 հատ*** «Նստարան «Երևան» և 2-րդ չափաբաժնով նախատեսված ***30 հատ*** «Աղբաման մեծ /ձուլվածքով/» ապրանքատեսակները՝ ռադիոտան հարակից տարածքում տեղադրելու համար:

• Ի պատասխան Պատվիրատուի 23.05.2016թ. թիվ 04/10162 գրությանը՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն 30.05.2016թ. թիվ 03/05.03 գրությամբ խնդրել է հաստատել մատակարարվող ապրանքների նմուշները և Երևան քաղաքում տեղադրման նպատակով ներկայացնել մատակարարվող ապրանքների տեղադրման հասցեները:

• Երևանի քաղաքապետարանը 30.05.2016թ. թիվ 04/10845 գրությամբ դիմել է Ընկերությանը և հայտնել, որ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված N 2 գնման ժամանակացույցի՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին պետք է տրամադրվի թվով 30 փոքր աղբաման:

• Երևանի քաղաքապետարանը 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ տեղեկացնելով, որ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն սույն թվականի մայիս ամսվա համար նախատեսված ապրանքը դեռևս չի մատակարարել և տեղադրել, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.5 կետն, առաջարկել է 2016թ. մայիս ամսվա համար նախատեսված ապրանքը մատակարարել և տեղադրել ***հունիսի 6-ին***՝ կից ներկայացնելով ապրանքը տեղադրելու համար նախատեսված հասցեները:

• Միևնույն ժամանակ, Երևանի քաղաքապետարանը 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությունն էլեկտրոնային եղանակով նույն օրն ուղարկել է Ընկերության հին՝ ***nor-energy@mail.ru*** էլեկտրոնային փոստի հասցեին:

• Համաձայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հասցեն սպասարկող փոստային առաքում իրականացնող մարմնի կողմից ծրարի վրա դրված կնիքի՝ Երևանի քաղաքապետարանի 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությունը համապատասխան փոստային բաժանմունքին հանձնվել է ***07.06.2016թ.:***

• Պատվիրատուն 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությունն էլեկտրոնային եղանակով ***07.06.2016թ.*** ուղարկել է Ընկերության ***norenergy01@gmail.com*** էլեկտրոնային փոստի հասցեին:

• Երևանի քաղաքապետարանը 07.06.2016թ. թիվ 04/11666 գրությամբ կրկին է դիմել Ընկերությանը՝ հայտնելով, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.5 կետը Պատվիրատուի 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությունն ուղարկվել է նաև Ընկերության էլեկտրոնային հասցեին, ըստ որի՝ անհրաժեշտ էր գրությամբ նշված ապրանքները նշված հասցեներով ***տեղադրել 06.06.2016թ.,*** սակայն դեռ չեն տեղադրվել:

• Երևանի քաղաքապետարանը 07.06.2016թ. թիվ 04/11666 գրությունն ***07.06.2016թ.*** էլեկտրոնային եղանակով ուղարկել է նաև Ընկերության ***norenergy01@gmail.com*** էլեկտրոնային փոստի հասցեին:

• Համաձայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հասցեն սպասարկող փոստային առաքումն իրականացնող մարմնի կողմից ծրարի վրա դրված կնիքի՝ Երևանի քաղաքապետարանի 07.06.2016թ. թիվ 04/11666 գրությունը համապատասխան փոստային բաժանմունքին հանձնվել է ***09.06.2016թ.:***

• Ի պատասխան Պատվիրատուի ***07.06.2016թ.*** էլեկտրոնային եղանակով ուղարկված 07.06.2016թ. թիվ 04/11666 գրության, «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն 08.06.2016թ. թիվ 01/06.01 գրությամբ հայտնել է, որ վերջինս Երևանի քաղաքապետարանին է ներկայացնում նմուշ՝ հաստատման համար և պատրաստ է մատակարարել պահանջվող ապրանքները, միաժամանակ տեղեկացնելով, որ Ընկերությանն ուղղված 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությունը դեռևս չեն ստացել:

• «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն 08.06.2016թ. թիվ 02/06.02 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ վերջինս չի ստացել Երևանի քաղաքապետարանի 07.06.2016թ. թիվ 04/11666 գրությունը, սակայն պատրաստակամություն է հայտնում Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարել ***մինչև 2016թ. օգոստոս ամսվա 15-ը:***

• Երևանի քաղաքապետարանը ***08.06.2016թ.*** «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին ուղղված թիվ 06/838 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները և ղեկավարվելով Պայմանագրի 3.1.7 կետով և 3.1.7.1 կետի «բ» ենթակետով՝ միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է նաև, որ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը ստանալու օրվա դրությամբ Պայմանագրի 7.2 կետով հաշվարկված տույժի գումարը՝ սույն գրությունը ստանալու պահից երեք աշխատանքային

օրվա ընթացքում անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900015000046 հաշվեհամարին:

• Պատվիրատուն 09.06.2016թ. թիվ 01/61-11888 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի միջև 12.05.2016թ. կնքված պայմանագիրը միակողմանի լուծել է:

2. *ՀՀ ֆինանսների նախարարության 11.07.2016թ. թիվ 1/73-3/18057-16 գրությամբ ներկայացված «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին և «ՍԱՄ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝*

• Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով ***23.06.2016թ.*** հայտ են ներկայացրել նաև «Նոր Էներջի» ՍՊԸ-ն և «ՍԱՄ» ՍՊԸ-ն (կոնսորցիում):

• Ընթացակարգի արդյունքում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նոր Էներջի» ՍՊԸ և «ՍԱՄ» ՍՊԸ կոնսորցիումը:

• Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.06.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.7 կետով որոշել է ծանուցել Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար:

• Երևանի քաղաքապետարանը 06.07.2017թ. թիվ 01/61-14304 գրությամբ դիմել է Նախարարությանը՝ հայտնելով, որ կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, ինչի արդյունքում Պատվիրատուն մերժել է վերջիններիս կողմից ներկայացված հայտը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-18/17 բողոքը, Խորհուրդը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին ***նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

1. Երևանի քաղաքապետարանի և «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի միջև 12.05.2016թ. կնքվել է Երևան քաղաքի փողոցների, հրապարակների և այգիների կահավորման նպատակով նստարանների և աղբամանների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/9» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ վաճառողը ապրանքը հասցնում է գնորդին (ստացողին)՝ նրա կողմից նշված հասցեով (հասցեներով):

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսվել է 1-ին չափաբաժնով ***30 հատ*** «Նստարան «Երևան», 2-րդ չափաբաժնով՝ ***30 հատ*** «Աղբաման մեծ /ձուլվածքով/» և 3-րդ չափաբաժնով՝ ***30 հատ*** «Աղբաման փոքր /ձուլվածքով/» ապրանքները մատակարարել 2016թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում՝ ըստ ամիսների:

Ընկերությունը պարտավորվել է մատակարարել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված N 1 տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները՝ հավելված N 2 գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում:

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 11.07.2016թ. թիվ 1/07.11 գրությամբ հայտնել է, որ փոփոխվել է վերջինիս էլեկտրոնային փոստի հասցեն, ինչի վերաբերյալ Ընկերության նոր էլեկտրոնային փոստից՝ norenergy01@gmail.com գրություն է ուղարկվել Պատվիրատուի gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Խորհուրդն, ուսումնասիրելով առկա նյութերը, պարզել է, որ Երևանի քաղաքապետարանը «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին ուղղված 23.05.2016թ. թիվ 04/10162 և 30.05.2016թ. թիվ 04/10845 գրություններով պահանջել է մատակարարել համապատասխանաբար՝ 1-ին չափաբաժնով նախատեսված թվով ***30 հատ*** «Նստարան «Երևան», 2-րդ չափաբաժնով նախատեսված ***30 հատ*** «Աղբաման մեծ /ձուլվածքով/» և թվով ***30 հատ*** փոքր աղբաման ապրանքատեսակները, սակայն չի նշել, թե վերոհիշյալ ապրանքներն ինչ հասցեներով պետք է մատակարարվեն, մինչդեռ Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ վաճառողը ապրանքը հասցնում է գնորդին (ստացողին)՝ նրա կողմից նշված հասցեով (հասցեներով):

Այսպիսով, 03.06.2016թ. Ընկերությանն ուղղված թիվ 04/11393 գրությամբ Պատվիրատուն պահանջել է ապրանքները մատակարարել և տեղադրել 06.06.2016թ.-ի գրությամբ ներկայացված հասցեներով: Սակայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հասցեն սպասարկող փոստային առաքումն իրականացնող մարմնի կողմից ծրարի վրա դրված կնիքի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությունը համապատասխան փոստային բաժանմունքին հանձնվել է Պատվիրատուի կողմից մատակարարման համար նշված ամսաթվի՝ 06.06.2016թ.-ին հաջորդող օրը՝ ***07.06.2016թ.,*** որպիսի պայմաններում Ընկերությունն օբյեկտիվորեն հնարավորություն չէր ունենա վերը նշված ապրանքատեսակը մատակարարել 06.06.2016թ.:

Ավելին, Պատվիրատուն 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությունն էլեկտրոնային եղանակով նույն օրն ուղարկել է Ընկերության հին՝ ***nor-energy@mail.ru*** էլեկտրոնային փոստի հասցեին, մինչդեռ Ընկերությունը դեռևս 09.05.2016թ. էլեկտրոնային եղանակով Երևանի քաղաքապետարանին է տրամադրել «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին պատկանող մեկ այլ, նոր էլեկտրոնային հասցե, այն է՝ norenergy01@gmail.com և խնդրել է նամակներն ուղարկել նշված էլեկտրոնային հասցեին:

Այնուհետև, Պատվիրատուն 07.06.2016թ. թիվ 04/11666 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությամբ նշված ապրանքներն անհրաժեշտ է նշված հասցեներով տեղադրել 06.06.2016թ.:

Երևանի քաղաքապետարանը 03.06.2016թ. թիվ 04/11393 (ըստ որի՝ Ընկերությունը պարտավոր էր մատակարարել վերը նշված ապրանքները ***06.06.2016թ.-ին)*** և 07.06.2016թ. թիվ 04/11666 գրությունները 07.06.2016թ. համապատասխանաբար՝ ժամը 16:25-ին և ժամը 17:13-ին ուղարկել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի norenergy01@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին:

Անհրաժեշտ է նշել, որ Պատվիրատուի ***07.06.2016թ. թիվ 04/11666 գրությունը,*** համաձայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հասցեն սպասարկող փոստային առաքումն իրականացնող մարմնի կողմից ծրարի վրա դրված կնիքի՝ համապատասխան փոստային բաժանմունքին հանձնվել է ***09.06.2016թ.:***

Ընկերությունը 08.06.2016թ. թիվ 02/06.02 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ վերջինս չի ստացել Երևանի քաղաքապետարանի 07.06.2016թ. թիվ 04/11666 գրությունը, մինչդեռ Պատվիրատուն ***08.06.2016թ.*** «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին ուղղված թիվ 06/838 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները և ղեկավարվելով Պայմանագրի 3.1.7 կետով և 3.1.7.1 կետի «բ» ենթակետով՝ միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1-ի կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ապրանքի մատակարարման ***ժամկետները խախտվել են 4 օրից ավելի:***

Նման փաստական հանգամանքների պարագայում, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից չեն խախտվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից 2016թ. մայիս ամսվա մատակարարումը չի իրականացվել, քանի որ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.2 կետի համաձայն Ընկերությանը չեն ներկայացվել ապրանքի մատակարարման հասցեները, ինչն ընդունել է նաև Պատվիրատուն՝ մայիս ամսվա մատակարարումները տեղափոխելով 06.06.2016թ.:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի 03.06.2016թ. թիվ 04/11393 գրությամբ պահանջված մատակարարումն Ընկերության կողմից իրականացնելն օբյեկտիվորեն հնարավոր չի եղել, քանի որ նշված գրությունը, փոստային առաքումն իրականացնող մարմնի կողմից ծրարի վրա դրված կնիքի համաձայն՝ համապատասխան փոստային բաժանմունքին հանձնվել է 07.06.2016թ., այսինքն մատակարարման համար սահմանված ամսաթվի՝ 06.06.2016թ.-ին հաջորդող օրը:

Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Պատվիրատուն ղեկավարվելով Պայմանագրի 3.1.7 կետով և 3.1.7.1 կետի «բ» ենթակետով լուծելով Երևանի քաղաքապետարանի և «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի միջև 12.05.2016թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/9» ծածկագրով պայմանագիրը գործել է ոչ իրավաչափ, ուստի և Ընկերության կողմից չեն խախտվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և որպես հետևանք՝ «Նոր Էներջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԲԸՀԱՊՁԲ-16/2» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***23.06.2016թ.*** հայտ ներկայացրել նաև «Նոր Էներջի» ՍՊԸ և «ՍԱՄ» ՍՊԸ կոնսորցիումը:

Ընթացակարգի արդյունքում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նոր Էներջի» ՍՊԸ և «ՍԱՄ» ՍՊԸ կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.06.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.7 կետով ծանուցել է Ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար, սակայն կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում հրավերով

նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, ինչի արդյունքում Պատվիրատուն մերժել է վերջիններիս ներկայացրած հայտը:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նոր Էներջի» ՍՊԸ-ն և «ՍԱՄ» ՍՊԸ-ն ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել են մեկ անգամ***, ինչի արդյունքում գնման գործընթացին տվյալ մասնակիցների հետագա մասնակցությունը դադարեցվել է, ուստի գտնում ենք, որ «Նոր Էներջի» ՍՊԸ-ին և «ՍԱՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 11.07.2016թ. թիվ 1/73-3/18057-16 գրությամբ ներկայացված «ՍԱՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 7716774368) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

2. ՀՀ ֆինանսների նախարարության 20.06.2016թ. թիվ 1/73-1/16694-16 և 11.07.2016թ. թիվ 1/73-3/18057-16 գրություններով ներկայացված «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01261341) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Բաղալյան Սյունե**